

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԲՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԱԾԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ  
ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները՝ ի դեմս  
Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով Բնական եւ տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման ու  
հետեւանքների վերացման բնագավառում փոխգործակցության մասին 1993 թվականի  
հունվարի 22-ի Համաձայնագրի վրա,

ցանկություն հայտնելով այսուհետ ավելի ամրապնդել միջպետական  
համագործակցությունը բնական եւ տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակների  
ռիսկերի նվազեցման, հետեւանքների մեղմացման բնագավառում,

համոզված լինելով տեղեկատվական միջավայրի ստեղծման անհրաժեշտության մեջ,  
որը թույլ կտա նվազագույն ժամկետներում ստանալ բնական եւ տեխնաժին բնույթի  
արտակարգ իրավիճակների անդրսահմանային ներգործության վերաբերյալ բոլոր  
անհրաժեշտ ու հավաստի տեղեկությունները,

ընդունելով բնական եւ տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման ու  
հետեւանքների վերացման, տուժած բնակչությանը օգնություն ցույց տալու  
միջոցառումների իրականացման համար տեղեկատվական ռեսուրսների համատեղ  
օգտագործման անհրաժեշտությունը,

նշելով այդ բնագավառում տեղեկատվության փոխանակման վերաբերյալ երկկողմ եւ  
բազմակողմ պայմանավորվածությունների օգտակարությունը, համաձայնեցին ներքոշարադրյալի մասին.

ՀՈՂՎԵՐ 1

Կողմերը լիազորված մարմինների, ինչպես նաեւ ազգային տեղեկատվական  
գործակալությունների (Կողմերի կենտրոնական պետական տեղեկատվական  
գործակալություններ) միջոցով իրականացնում են իրենց պետությունների  
տարածքներում բնական եւ տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակների, փոխադարձ  
օգնության մասին Կողմերի հարցումների եւ առաջարկությունների, ինչպես նաեւ  
միջազգային կազմակերպություններից օգնության վերաբերյալ տեղեկատվության  
համակողմանի փոխանակում:

ՀՈՂՎԵՐ 2

Կողմերը, օգտագործելով ազգային տեղեկատվական ռեսուրսները, միջոցներ են  
ձեռնարկում տեղեկատվության միջպետական փոխանակման արդյունավետ համակարգի  
ստեղծման, բնական եւ տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման ու  
հետեւանքների վերացման ոլորտում տվյալների միասնական բանկի կազմակերպման  
համար:

ՀՈՂՎԵՐ 3

Կողմերը, սույն Համաձայնագրին եւ այլ միջազգային պայմանագրերին  
համապատասխան, որի մասնակիցներ են իրենք, ինչպես նաեւ ազգային օրենսդրության  
համապատասխան, զարգացնում են համագործակցությունը բնական ու տեխնաժին բնույթի  
արտակարգ իրավիճակների մասին տեղեկատվության միջպետական փոխանակության  
նորմատիվ իրավական ու մեթոդական բազա ստեղծելու, դրանց հետեւանքները  
վերացնելու եւ տուժած բնակչությանն օգնություն ցույց տալու ժամանակ  
տեղեկատվական փոխգործակցության ոլորտում:

ՀՈՂՎԵՐ 4

Կողմերը տեղեկատվությունը փոխանակում են Անկախ Պետությունների  
Համագործակցության աշխատանքային լեզվով՝ պահպանելով միջազգային ստանդարտներով  
սահմանված՝ հաղորդագրություններ փոխանցելու եղանակները՝ օգտագործելով Կողմերի  
գործող տեղեկատվական-հեռահաղորդակցային ռեսուրսները, ինչպես նաև նոր ստեղծվող  
կապի համակարգերը:

Կողմերը պատասխանատվություն են կրում արտակարգ իրավիճակների վերաբերյալ  
տեղեկատվության ամբողջականության եւ հավաստիության համար:

#### ՀՈՂՎԱԾ 5

Բնական եւ տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակները կանխելու եւ  
հետեւանքները վերացնելու, տուժած բնակչությանն օգնություն ցույց տալու եւ  
շրջակա միջավայրի աղտոտվածությունը կանխելու բնագավառում արդյունավետ  
փոխգործակցելու նպատակով Կողմերն իրականացնում են միջոցառումներ արտակարգ  
իրավիճակների ռիսկի կառավարման ազգային համակարգերի զարգացման համար՝  
ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, կառավարման ավտոմատացված  
համակարգերի, կապի ու ազդարարման համակարգերի կատարելագործման բազայի վրա:

#### ՀՈՂՎԱԾ 6

Կողմերը բնական եւ տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակների մասին  
տեղեկատվության փոխանակման, դրանց կանխման եւ հետեւանքների վերացման եւ տուժած  
բնակչությանն օգնություն ցույց տալու համար տեղեկատվական փոխգործակցության  
բնագավառում իրականացնում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ  
նախագծեր: Կողմերի համագործակցությունը համատեղ նախագծերի նախապատրաստման եւ  
իրականացման գործում իրականացվում է առանձին համաձայնագրեր կնքելու միջոցով:

#### ՀՈՂՎԱԾ 7

Կողմերի ազգային տեղեկատվական գործակալությունները փոխանակում են միայն  
այն տեղեկությունները, որոնք տրամադրվում են արտակարգ իրավիճակների կառավարման  
ոլորտում Կողմերի լիազորված մարմինների կողմից:

#### ՀՈՂՎԱԾ 8

Սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող գործունեության արդյունքում  
ստացված տեղեկությունը, բացառությամբ այն տեղեկության, որը, Կողմերի  
օրենսդրության համաձայն, ենթակա չէ հրապարակման, հրապարակվում է սահմանված  
կարգով:

#### ՀՈՂՎԱԾ 9

Կողմերի իրավասու մարմինները եւ ազգային տեղեկատվական գործակալությունները  
անմիջական կապ են հաստատում սույն Համաձայնագիրն իրականացնելու նպատակով:

#### ՀՈՂՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի կիրառման ու մեկնաբանման հետ կապված վեճերը լուծվում  
են շահագրգիռ Կողմերի միջեւ՝ խորհրդատվությունների եւ բանակցությունների  
միջոցով:

#### ՀՈՂՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ

Ներպետական ընթացակարգերը այն ստորագրած Կողմերի կողմից կատարելու մասին երրորդ ծանուցագիրը ավանդապահին հանձնելու օրվանից:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահին համապատասխան ծանուցումը հանձնելու օրվանից:

#### ՀՈՂՎԱԾ 12

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ ու լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրությամբ, որը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը եւ ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով:

#### ՀՈՂՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրը միանալու համար բաց է դրա դրույթներն ընդունող եւ սույն Համաձայնագրից բխող պարտավորությունները ստանձնելու պատրաստ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համար: Միացող պետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահին միանալու վերաբերյալ փաստաթուղթը հանձնելու օրվանից:

Այն պետությունների համար, որոնք չեն մտնում Անկախ Պետությունների Համագործակցության մեջ, բայց ընդունում են սույն Համաձայնագրի դրույթները, միացումն իրականացվում է բոլոր Կողմերի համաձայնությամբ՝ միանալու վերաբերյալ փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով: Միացումը համարվում է ուժի մեջ մտած միանալու համաձայնության վերաբերյալ վերջին հայտարարությունը ավանդապահին հանձնելու օրվանից:

#### ՀՈՂՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից՝ հինգ տարի ժամկետով: Այս ժամկետը լրանալուց հետո սույն Համաձայնագրի գործողությունը ինքնաբերաբար երկարաձգվում է, յուրաքանչյուր անգամ՝ հնգամյա ժամկետով, եթե Կողմերը այլ որոշում չեն ընդունում:

#### ՀՈՂՎԱԾ 15

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

Կատարված է Յալթա քաղաքում 2003 թվականի սեպտեմբերի 18-ին, մեկ բևորինակով, ռուսերեն: Բևորինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

\* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի սեպտեմբերի 7-ից: